https://doi.org/10.52027/18294685-mm.2.25-10

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄՀԵՐ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Հայաստանի պատմության թանգարան
«Կաճառ» գիտական կենտրոն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղ, մարզային գրադարան, մատենագիտություն, ընթերցանության մշակույթ, հասարակական հիշողություն, կրթական միջավայր, ֆոնդեր, մեթոդական գործունեություն, երկրագիտություն, մշակութային ժառանգություն։
Keywords: Nagorno-Karabakh, regional library, bibliography, reading culture, public memory, educational environment, library collections, methodological activity, local studies, cultural heritage.

Ներածություն

Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանը խորհրդային շրջանում տարածաշրջանի մշակութային, կրթական և գաղափարական քաղաքականության հիմնական օղակներից մեկն էր։ Նրա ձևավորումն ու զարգացումը սերտորեն կապված են եղել ինչպես պետական մշակութային ծրագրերի, այնպես էլ Արցախի բնակչության կրթամշակութային պահանջների հետ։

Գրադարանների պատմությունը միշտ էլ եղել է հանրային հիշողության արտացոլումը. դրանք ոչ միայն գիտելիքի պահոցներ են, այլև հասարակության մշակութային և քաղաքական ինքնության ձևավորման վայրեր։ Այդ տեսանկյունից Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանը ուներ յուրահատուկ նշանակություն՝ իբրև մի այնպիսի հաստատություն, որտեղ ձևավորվել է **տեղային ինքնագիտակցության, ընթերցանության մշակույթի և հանրային կրթության համադրված համակարգը**։

Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանը ներկայացնում է կարևոր պատմամշակութային և գիտակրթական ինստիտուտ, որը երկար տարիներ ծառայել է որպես համայնքային գիտելիքի, կրթության և մշակութային ժառանգության կենտրոն։ Արցախի բռնազավթումից և արցախցիների տեղահանությունից հետո՝ գրադարանի պատմությունը և փորձը դարձել են առավել արժեքավոր որպես համայնքային հիշողության ու ինքնության պահպանման խորհրդանիշ։ Նրա գրքերի, պարբերականների, ձեռագրերի և մտավոր հարստության երբեմնի հավաքածուները ներկայացնում են հայրենի եզերքի մշակութային ու գիտական ժառանգությունը, ինչն առանձնահատուկ կարևորություն է ստանում հիշողության հետազոտությունների և տեղական փորձի վերլուծության տեսանկյունից։

Այս թեմայի ուսումնասիրությունն ունի գիտակիրառական նշանակություն, քանի որ այն թույլ է տալիս համակարգել և գնահատել Լեռնային Ղարաբաղի մարզային

գրադարանի փորձը՝ իբրև գիտակրթական և հիշողության ինստիտուտ, ինչպես նաև ձևավորել ամուր հիմքեր համայնքային կրթության, մշակութային զարգացման և պատմական հիշողության պահպանման հետագա գործունեության համար։

Հոդվածի նպատակն է վերլուծել մարզային գրադարանի դերը՝ որպես կրթամշակութային և հանրային հիշողության ինստիտուտ՝ բացահայտելով դրա գործունեության կառուցվածքը, հիմնական ուղղությունները և ազդեցությունը հանրային գիտակցության վրա։

Սույն հոդվածի ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1920-80-ական թվականները, որպես մարզային գրադարանի պատմության առանցքային ժամանակամիջոց՝ ստեղծումից մինչև կայացում և զարգացում։ Հետագա փոխակերպումները, մանավանդ Արցախյան շարժման և անկախ պետականության շինարարության տարիները համարում ենք առանձին ուսումնասիրության նյութ՝ ելնելով պատմական միջավայրի և, առհասարակ, համաժողովրդական զարթոնքի ալիքի վրա, ազգային մշակույթի զարգացման առանձնահատկություններից։

Մինչև Շուշի քաղաքի 1920 թ. բարբարոսական ավերումը և հայկական մշակույթի ոսկե դարի ընդհատումը եղած Արցախի գրադարանների մասին գրել են Ռ. Տեր-Գասպարյանը [Տեր-Գասպարյան, 1993, 121-123], Է. Դանիելյանը [Դանիելյան, 2005, 299-301], Վ. Բալայանը [Բալայան, 2017, 238-240] և այլ ուսումնասիրողներ։

Արցախի Հանրապետության օրոք հանրապետական, համայնքային, գերատեսչական և ուսումնական հաստատությունների գրադարանների մասին ուշագրավ տեղեկություններ կան Հայաստանի գրադարանների աշխատանքների վիճակագրական վերլուծությունների մատենաշարում Արցախի գրադարաններին նվիրված էջերում [Արցախի գրադարանների մասին, 2016, 91-92, Արցախի գրադարանների մասին, 2017, 97-98, Արցախի գրադարանների մասին, 2022, 95-97], հանրագիտարանային հրատարակություններում [Հայ գրատպություն և գրքարվեստ, 2015, 463, 983-984], Գ. Սուքիասյանի [Սուքիասյան, 2014, 15-24, Սուքիասյան, 2020, Սուքիասյան, 2024, 303-312], Ի. Առաքելյանի [Առաքելյան, 2025, 73-78] հրապարակումներում։ Թեմայի վերաբերյալ տեղեկություններ կարելի է գտնել Ս. Կարապետյանի [Կարապետյան, 1962], Ս. Ավագյանի [Ավագյան, 1982], Ա. Մարտիրոսյանի [Մարտիրոսյան, 1989] և այլ հեղինակների աշխատանքներում։

Մեր ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքն են կազմել ինչպես նշված մասնագիտական գրականությունը, այնպես էլ «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում պահպանված Արտո Մարտիրոսյանի **«ԼՂԻՄ Մ. Գորկու անվան մարզային գրադարանի պատմությունից»** վերնագրով աշխատանքի հատվածական էջերը, որոնք կարելի է համարել եզակի վավերագրական աղբյուր [Մարտիրոսյան, 1987, 1-76]։

Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանի ձևավորումը և հասարակական դերը

Գրադարանի ձևավորումը սկսվում է 1920-ական թվականների կեսերին, երբ այն աստիճանաբար դառնում է մարզի գաղափարական և կրթական աշխատանքի

կազմակերպման կենտրոն: Սկզբնական շրջանում նրա գործունեությունը սահմանափակվում էր գրքի հանրահռչակմամբ և մատենագիտական տեղեկատվության տարածմամբ, սակայն շուտով այն վերածվեց կրթամեթոդական ու դաստիարակչական հաստատության:

Գրադարանի հիմնական առաքելությունը գիտելիքի հանրայնացումն էր: Գրքային ֆոնդերի համալրումը, գրականության թարգմանությունն ու հասանելիությունը ապահովում էին հասարակության կրթական առաջընթացը: Արդեն 1930-ական թվականներին այն ուներ շուրջ 400 ընթերցող, իսկ 1980-ականներին՝ հազարավոր հաճախորդներ:

Գրադարանը դարձավ նաև **բազմալեզու կրթամշակութային միջավայր**, քանի որ սպասարկումն իրականացվում էր հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով, ինչը նպաստում էր գրքի և կրթության տարածմանը տարբեր ազգային համայնքների միջև:

ԼՂ մարզային գրադարանի պատմությունը վկայում է, որ գրքի տարածման գործը խորհրդային շրջանում ուներ ոչ միայն կրթական, այլև գաղափարական նշանակություն: Գրադարանը որպես պետական մշակութային քաղաքականության գործիք՝ միաժամանակ իրականացնում էր տեղական ինքնության ձևավորման գործընթաց:

Այն ապահովում էր գիտելիքի հասանելիություն բազմալեզու բնակչության համար, ստեղծում էր ընթերցողական վարքագծի նոր ձևեր և նպաստում ինտելեկտուալ միջավայրի ձևավորմանը, որը հետագայում դառնում էր Արցախյան մշակութային ինքնագիտակցության կարևոր բաղադրիչ:

Այսօր, հետադարձ հայացքով գնահատելով այդ գործընթացները, կարելի է եզրակացնել, որ ԼՂ մարզային գրադարանը՝ իր երկարամյա փորձով և ձևավորված ավանդույթներով, հանրային հիշողության կարևոր հաստատություններից էր: Այն ոչ միայն հարատևեց և զարգացրեց բնիկ հայ բնակչությամբ տարածաշրջանի գրքային մշակույթը, այլև զգալի ներդրում ունեցավ ազգային ինքնության պահպանման, ինչպես նաև վերջինիս առաջ ծառացած բազմաբնույթ մարտահրավերներին դիմագրավելու պատմության մեջ:

Աշխատանք ընթերցողների հետ և մասսայական միջոցառումներ

Գրադարանի՝ ընթերցանությունն ըստ ամենայնի խթանելու քաղաքականությունը հիմնված էր գրքի՝ որպես գաղափարական և մշակութային արժեքի ընկալման վրա: Այն կազմակերպում էր տարաբնույթ կոնֆերանսներ, գրքերի քննարկումներ, գրական երեկոներ և հանդիպումներ՝ նվիրված հայ և օտար հեղինակների ստեղծագործություններին:

Այս միջոցառումները ոչ միայն զարգացնում էին ընթերցողական հետաքրքրությունները, այլև նպաստում **բանավոր խոսքի և գրավոր մշակույթի բարձրացմանը**, կրթում էին լայն հասարակական լսարանին:

Գրադարանը սերտ կապերի մեջ էր մարզի մտավորականության հետ. գրողները, ուսուցիչները, բժիշկներն ու ուսանողները մասնակցում էին քննարկումներին,

զեկուցումներին ու ստեղծագործական երեկոներին՝ դարձնելով գրադարանը հանրային երկխոսության կենտրոն։

Այս ձևաչափով ընթերցանությունը ստացավ հանրային բնույթ՝ վերածվելով **մշակութային հաղորդակցության ձևի**, որը գերազանցում էր կրթության սահմանները և նպաստում էր սոցիալական համախմբմանը։

ԼՂ մարզային գրադարանի մասսայական աշխատանքը խորհրդային մշակութային համակարգում յուրահատուկ դեր էր կատարում. այն ոչ միայն ապահովում էր գաղափարական վերահսկողություն և ընթերցողական համախմբում, այլև ստեղծում էր հանրային հաղորդակցության ու ինքնադրսևորման հարթակ, որտեղ քաղաքացին վերածվում էր ընթերցողի, իսկ ընթերցողը՝ մասնակցի։

Այս երևույթը կարելի է դիտարկել որպես ժողովրդավարացման ձև՝ մշակութային ոլորտում, որը, թեև կաղապարվում էր գաղափարական շրջանակներով, իրականում նպաստում էր մտավոր ներուժի համախմբմանը և հասարակական կյանքի ինտելեկտուալացմանը։

Այս իմաստով Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանը ոչ միայն որպես կրթական հաստատություն էր, այլև որպես հիշողության և ինքնության պահպանման ինստիտուցիոնալ միջավայր, որն իր բազմամյա գործունեությամբ ամրապնդեց գրքի և մշակույթի հանրային դերը Արցախի կրթամշակութային կյանքում։

Գրքային ֆոնդերի ձևավորումը և աղբյուրագիտական նշանակությունը

Գրադարանի գրքային ֆոնդերի աճը տպավորիչ էր. 1946 թ. այն ուներ շուրջ 14 հազար միավոր, իսկ 1956 թ.՝ արդեն 64 հազար։ Նվիրատվությունները, պետական հատկացումները և մասնավոր նախաձեռնությունները հարստացնում էին ֆոնդերը՝ ընդգրկելով ոչ միայն դասական, այլև գիտական և հանրամատչելի գրականություն։

Ֆոնդերի մեջ առանձնակի տեղ էին զբաղեցնում մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների աշխատությունները, հանրագիտարաններ, բառարաններ, ինչպես նաև տեղական հրատարակություններ։ 1960-ականներից գրադարանն արդեն ստանում էր պարբերական մամուլի պարտադիր օրինակները, որոնցից ձևավորվեց մամուլի հարուստ արխիվ։

Հատուկ տեղ էր հատկացված նվիրատվությունների ֆոնդին, որտեղ պահվում էին եզակի և հազվագյուտ հրատարակություններ՝ ստացված ինչպես ակադեմիական շրջանակներից, այնպես էլ մտավորականներից և գրողներից։

Նշանավոր նվիրատուների թվում էին ակադեմիկոս Ա. Առաքելյանը, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հ. Գալաչյանը, դոցենտ Ա. Օհանյանը, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Մովսեսյանը, իրավաբան Գ. Հախումյանը, հին կոմունիստ Հ. Տեր-Սարկիսովը, տնտեսագիտության դոկտոր-պրոֆեսոր Ռ. Դանիելյանը, ինչպես նաև գրողներ Լ. Հուրունցը, Ա. Գրաշին, Ս.Գրիգորյանը, Մ.Հարությունյանը և շատ ուրիշներ [Մարտիրոսյան, 1987, 8]։ Այս տեղեկություններին կարելի է հանդիպել նաև գրադարանի նախկին տնօրեն Ս.

Կարապետյանի գրքում, որտեղ արձանագրված է, որ «մեծ քանակությամբ գրականություն ենք ստացել Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանից» [Կարապետյան 1962, 8]։

Այս նվիրատվությունները ձևավորեցին յուրատեսակ հուշագրադարանային շերտ, որտեղ յուրաքանչյուր գիրք արտացոլում էր անհատի գիտելիքի և հայրենասիրության ներդրումը հասարակական կրթության գործում։

Գրադարանն այդ կերպ ստեղծեց յուրատեսակ **պատմամշակութային հիշողության ֆոնդ**, որը պահպանեց և փոխանցեց ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային գիտելիքը։

Տեղեկատու-մատենագիտական գործունեությունը որպես հիշողության համակարգ

Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանի տեղեկատու-մատենագիտական աշխատանքը ձևավորվեց 1950-ական թվականներից։ Այն ներառում էր նոր գրականության քարտարանների, երաշխավորական ցանկերի, երկրագիտական ֆոնդերի և տեղեկատուների ստեղծումը։

Այս աշխատանքը նպաստեց ոչ միայն տեղեկատվության համակարգմանը, այլև գիտական աղբյուրագիտության զարգացմանը։

Գրադարանում ձևավորվեցին շուրջ **40 թեմատիկ քարտարան**, ինչպես նաև **անհատական** քարտարաններ, որոնք պարունակում էին տվյալներ նշանավոր գործիչների և գիտնականների մասին։ Այս աշխատանքը ձևավորեց յուրատեսակ տեղեկատվական դիմապատկեր հայ մտավորականության և Արցախի մշակութային կյանքի համար, ինչն ընթերցողին ընձեռում էր անհատականացված ճանաչողական հնարավորություն։

1952 թվականից սկսած, մարզային գրադարանը կապ հաստատեց միութենական (Մոսկվայի, Լենինգրադի) և հանրապետական (Երևանի) առաջատար գրադարանների հետ՝ ստանալով նրանցից տարեգրքեր, պաստառներ, օրացույցներ և մամուլի թեմատիկ հավաքածուներ։ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական և այլ գրադարաններից ստացված նյութերը համալրեցին գրադարանի համապատասխան ֆոնդերը և բաժինները։ Այս համագործակցությունը նպաստեց տեղեկատվական փոխանակման և գրադարանների միջև մասնագիտական կապերի խորացմանը։

Այս գործունեությունը գրադարանը վերածեց գիտական հիշողության կենտրոնի, որտեղ փաստագրվում էր Արցախի մտավոր և մշակութային կյանքը։

Ստեղծվեց նաև թերթերի և ամսագրերի հոդվածների սիստեմատիկ գրացուցակ՝ ըստ գիտության ճյուղերի։ Ամեն տարի քարտագրվում էր շուրջ 2500 միավոր նյութ, ինչպես նաև ավելացվում էին ավելի քան 12 հազար ռուսական պարբերականների տպագիր քարտեր։ Սա վկայում է, որ գրադարանը ոչ միայն հավաքում, այլև մշակում էր տեղեկատվությունը՝ այն վերածելով գիտահանրամատչելի մատենագիտական արտադրանքի։

Երկրագիտական աշխատանք

Գրադարանի մատենագիտական գործունեության կարևոր բաղադրիչն էր երկրագիտական ուղղությունը, որը սկիզբ առավ կուլտուրայի վաստակավոր գործիչ, գրադարանի նախկին տնօրեն Սուրեն Կարապետյանի նախաձեռնությամբ: Նա նախաձեռնել էր նամակագրական կապ միության տարբեր քաղաքներում ապրող արցախցի նշանավոր անձանց՝ գիտնականների, գրողների, հասարակական գործիչների հետ: Վերջիններս հայրենասիրական պարտքի զգացումով գրադարանին էին ուղարկում ոչ միայն իրենց աշխատությունները և կենսագրական տվյալները, այլև՝ հազվագյուտ գրականություն, լուսանկարներ և ձեռագրեր, որոնք վերածվեցին տեղական պատմության վավերագրական բազայի:

Տարիների ընթացքում գրադարանում կուտակվեց զգալի քանակությամբ երկրագիտական նյութ: Ուսումնասիրվեցին և առանձնացվեցին Լեռնային Ղարաբաղի մասին գրքերը, արցախցի հեղինակների ստեղծագործությունները, պարբերական մամուլից և գրքերից քաղվեցին տեղական պատմությանը վերաբերող ուշագրավ նյութեր, որոնք համախմբվեցին երկրագիտական ֆոնդի և քարտարանի մեջ [Խմբագրական, Կաճառ, 7, 2015, 106-108]:

Այս գործընթացը դարձավ Արցախում տեղական ինքնության գիտական ուսումնասիրության նախնական ձևերից մեկը՝ որպես գրադարանի միջոցով ձևավորված համայնքային հիշողության գիտաբանական համակարգ:

Բացի այդ, մարզային գրադարանը կազմեց արցախցի մի շարք գրողների և բժիշկների մատենագիտություններ՝ փաստելով նրանց գործունեության գիտական արձանագրությունը և նպաստելով տեղական գիտական ժառանգության պահպանմանը [Մարտիրոսյան, 1987, 11]:

Այսպիսով, տեղեկատու-մատենագիտական գործունեությունը Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանում ոչ միայն ապահովում էր գրքի և տեղեկատվության շրջանառությունը, այլև վերածվել էր գիտաճանաչողական և պատմական հիշողության գործառույթներ իրականացնող ինստիտուցիոնալ կառույցի: Այն ձևավորեց գիտելիքի կազմակերպման նոր մշակույթ, որտեղ մատենագիտությունը ծառայեց ոչ թե վարչական հաշվառման, այլ գիտական և ազգային ինքնության պահպանման նպատակին:

Մատենագիտության և երկրագիտության փոխկապակցված զարգացումը գրադարանը վերածեց Արցախի ինքնաճանաչման կենտրոնի, որտեղ յուրաքանչյուր գրքույկ, քարտարան կամ տեղեկանք դառնում էր վավերագրական ապացույց տարածաշրջանի հոգևոր-մշակութային կենսունակության և պատմական հիշողության անընդհատության մասին:

Մեթոդական և գրադարանագիտական գործունեությունը

Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանն աստիճանաբար դարձավ ոչ միայն ընթերցողական և տեղեկատու կենտրոն, այլև մարզի գրադարանային գործի գլխավոր

կազմակերպիչն ու համակարգող մարմինը: Նրա գործունեությունը դուրս էր գալիս տեղական կառույցի սահմաններից՝ ընդգրկելով ամբողջ մարզի գրադարանային համակարգը՝ անկախ գրադարանների վարչական ենթակայությունից:

Գրադարանն իր վրա էր վերցրել մարզի գրադարանային համակարգի մեթոդական առաջնորդությունը՝ կազմակերպելով դասընթացներ, խորհրդատվություններ, տեսական քննարկումներ: 1957 թ. ստեղծվեց մեթոդիստի հաստիք, իսկ 1960–70-ական թվականներին մարզային գրադարանը դարձավ գրադարանային փորձի տարածման կենտրոն [Մարտիրոսյան, 1987, 12]:

Մարզային գրադարանը հատուկ ուշադրություն էր դարձնում մեթոդական նամակների, մատենագիտական ցանկերի, հիշարժան տարեթվերի օրացույցների, ինչպես նաև խորհրդատվական նյութերի պատրաստմանն ու շրջանառմանը: Դրանք պարբերաբար ուղարկվում էին մարզի համայնքային և գյուղական գրադարաններին՝ նպաստելով մասնագիտական աշխատանքի որակի բարձրացմանը:

ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի 1959 և 1974 թթ. որոշումները գրադարանային գործունեության զարգացման նոր փուլի սկիզբ դրեցին: Դրանց հիման վրա մարզային գրադարանը բարելավեց ֆոնդերի կառավարման մեխանիզմները, ներդրեց բաց դարակային սպասարկման համակարգ, կազմակերպեց մասնագիտական խորհրդատվություն և ակտիվ մշակութային միջոցառումներ: Այս քայլերը նպաստեցին ոչ միայն գրքի շրջանառության աճին, այլ նաև ընթերցողական մշակույթի խորացմանը՝ գրադարանը վերածելով **հասարակական հաղորդակցության կրթական միջավայրի**: Ըստ երևույթին, փոփոխվեց նաև գրադարանային մտածողությունը՝ գրադարանը **հասարակական կրթության և գաղափարական հաղորդակցության կենտրոնի** վերածելու առումով:

Հետևելով վերադաս մարմինների ընդունած համապատասխան որոշումներին՝ Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանն իր առաքելությունն էր համարում գիտության ու տեխնիկայի նվաճումները, մշակույթի և արվեստի արժեքները ընթերցողների լայն շրջանակների համար հանրայնացնելը՝ ձևավորելով կրթական և գաղափարական շարունակականության միջավայր:

Այդպիսով, գրադարանն իր գործունեության մեջ կարևոր նշանակություն տալով նաև լավագույն փորձի և տեսական հարցերի լուսաբանմանը, դրանք պարբերաբար ներկայացնում էր մամուլում և ռադիոյով՝ նպաստելով գրադարանային աշխատանքի հանրայնացմանը և մասնագիտական ինքնագիտակցության բարձրացմանը:

Այս մեթոդական աշխատանքների շնորհիվ գրադարանը ձևավորվեց որպես գրադարանագիտական հարթակ, որտեղ համադրվում էին տեսական գիտելիքն ու գործնական փորձը՝ գրքի մշակույթի տարածման համար:

Եզրակացություն

Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանը 20-րդ դարի երկրորդ կեսին ձևավորվեց որպես ինքնուրույն մշակութային և կրթական հաստատություն, որը

միաժամանակ կրում էր պետական քաղաքականության, հանրակրթական և ազգային ինքնության հետքեր: Այն ապահովում էր գիտելիքի շրջանառություն, հավաքում տեղական ժառանգությունը, և իր ֆոնդերի միջոցով կառուցում հանրային հիշողության հարթություն:

Ներկայումս, երբ մշակութային ժառանգության պահպանության խնդիրները նորից դառնում են արդիական, մարզային գրադարանի փորձը վկայում է, որ **գրադարանային գործը ոչ միայն տեղեկատվության տարածման միջոց է, այլև ազգային հիշողության պահպանման ձև**: Գրադարանը իր պատմական անցած ճանապարհով ցույց է տալիս, որ տեղական ինքնության գիտական վավերագրումը կարող է իրականացվել ոչ միայն ակադեմիական, այլև գրադարանային հարթակներում:

SUMMARY

The article is devoted to the analysis of the formation, historical development, and cultural role of the M. Gorky Regional Library of Nagorno-Karabakh as an educational, social, and cultural-scientific institution. It is noted that during the 1920s-1980s, the library functioned as one of the key centers of cultural life in Artsakh, where the processes of reading, knowledge dissemination, bibliographic activity, and the preservation of national identity were closely intertwined. The study examines the library's main directions of activity as a bearer of public memory and a hub of cultural communication, emphasizing its contribution to the formation of the educational environment, the dissemination of scientific thought, and the maintenance of national self-awareness. The model of preserving and transmitting the local cultural-scientific heritage established by the library may serve as an example for the future, particularly in the context of the collective return of the people of Artsakh and the realization of their right to self-determination.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Ի., Համառոտ ակնարկ Արցախի գրադարանների, հայկական տպագրական մշակույթի ու մատենագիտության զարգացման մասին // Չուբարյանական ընթերցումներ՝ նվիրված ականավոր գրադարանագետ Օհան Ստեփանի Չուբարյանին և գրադարանային-տեղեկատվական ու մատենագիտական զարգացման ժամանակակից հարցերին (18 հոկտեմբերի 2024 թ.), Գիտաժողովի զեկուցումների ժողովածու, կազմ.՝ Գ. Ա. Սուքիասյան, Երևան, հեղ. հրատ., 2025, էջ 73-78:
2. Ավագյան Ս., Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, Հայաստան,1982, 106 էջ:
3. Արցախի գրադարանների մասին // Հայաստանի գրադարանները 2015 թ., Աշխատանքների վիճակագրական վերլուծություն, կազմ.՝ Ա. Բաղդասարյան, Երևան, Գիրք, 2016, էջ 91-92:

4. Արցախի գրադարանների մասին // Հայաստանի գրադարանները 2016 թ., Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / կազմ.՝ Ա. Բաղդասարյան, Լ. Մուրադյան, Երևան, Գիրք, 2017, էջ 97-98:
5. Արցախի գրադարանների մասին // Հայաստանի գրադարանները 2021 թ., Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / կազմ.՝ Լ. Մուրադյան, Երևան, Գիրք, 2022, էջ 95-97:
6. Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, Զանգակ, 2017, 590 էջ:
7. Կարապետյան Ս., Խմբագրական, «Կաճառ» տարեգիրք, 7, 2015, էջ 106-108:
8. Կարապետյան, Ս., Լեռնային Ղարաբաղի Մ. Գորկու անվան մարզային գրադարանում, Ստեփանակերտ, ա. հ., 1962, 50 էջ:
9. Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա: Գիտահրատարակչական խորհուրդ՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր) և ուրիշներ, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2015, 1120 էջ:
10. Մարտիրոսյան Ա., ԼՂԻՄ Մ. Գորկու անվան մարզային գրադարանի պատմությունից, Ստեփանակերտ, 1987 (անտիպ): «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, Արտո Սամվելի Մարտիրոսյանի անձնական ծագման ֆոնդ, № 53, գ. № 1, էջ 1-76:
11. Մարտիրոսյան Ա., Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ԳՀԿ-ները 1977-1986 թվականներին (Ակնարկներ, աշխատանքների վերլուծություն և մեթոդական հանձնարարականներ), Ստեփանակերտ, ա. հ.,1989, 41 էջ:
12. Սուքիասյան Գ., Գիրքը և գրադարանը Արցախի պատմության մեջ // Շուշին՝ հայկական մշակույթի օջախ, Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ, «Կաճառ» տարեգիրք, 6, Շուշի, 2014, էջ 15-24:
13. Սուքիասյան Գ., Գիրքը և գրադարանային-տեղեկատվական մշակույթը Արցախում, Երևան, հեղ. հրատ., 2020, 107 էջ:
14. Սուքիասյան Գ., Գրքերի և գրադարանների ճակատագիրը Արցախյան պատերազմներում // Սուրբ Էջմիածինը՝ գրքի հանգրվան: Գիտաժողով՝ նվիրված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի հիմնադրման 10-ամյակին (6 հոկտեմբերի 2022 թ.): Զեկույցների ժողովածու, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2024, էջ 303-312:
15. Տեր-Գասպարյան Ռ., Շուշի քաղաքը, խմբ.՝ Պ. Մ. Մուրադյան, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1993, 125 էջ: